ՀՏԴ 061.12(479.25) + 050

Doi:10.54503/0135-0536-2024.1-329

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ*

Գիտատեխնիկական առաջընթացի ներկայիս տեմպերը պարտադրեցին հրատարակիչներին նորովի մոտենալ գիտական ամսագրերի տպագրությանը: Անհրաժեշտ պայման դարձավ թղթային հրատարակություններից անցում կատարել դրանց էլեկտրոնային համարժեքներին: Չէ՞որ հետազոտողին հետաքրքրում է, թե իր կատարած հետազոտության արդյունքներն որքան արագ հասանելի կդառնան գիտական հանրությանը: Արդյունքում շահում է թե՛ հոդվածի հեղինակը, քանի որ էլեկտրոնային ամսագրերի պարագայում կտրուկ բարձրանում են գիտնականի գիտաչափական ցուցանիշները և հոդվածի տեսանելիության շրջանակը և թե՛ ընթերցողը, քանի որ նրան շատ արագ հասանելի են դառնում իր հետազոտությունների թեմային առնչվող վերջին հրատարակությունները:

Գիտաչափության հիմնադիրներից Դերեկ Փրայսը նկատել է, որ սկսած 1600-ական թվականներից, երբ ի հայտ եկան առաջին գիտական ամսագրերը[1] և գրականությունը, մոտավորապես 15 տարվա պարբերականությամբ դրանց թիվը շարունակ կրկնապատկվում է[2]: Ըստ փաստական տվյալների՝ 2020 թ. դրությամբ աշխարհում առկա են գիտական 46.736 ամսագրեր: Վերջին 10 տարիների ընթացքում ակադեմիական ամսագրերի թիվն աճել է 28,7 %-ով՝ ամեն տարի աճելով միջինը 2,56 %-ով: Ակադեմիական բոլոր ամսագրերի 75 %-ը հրատարակվում է անգլերենով: 2020 թ. հրատարակվել է 35.070 անգլերեն ամսագիր[3], որոնց թիվը վերջին 10 տարիների ընթացքում աճել է տարեկան միջինը 3,22 %-ով: Դրանց թիվը 2020 թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ նվազել է 0,42 %-ով: Գիտական գրականության թողարկման ներկայիս տեմպերը էքսպոնենցիալ (ցուցչային) աճի միտում են ցուցաբերում:

---

* *Ներկայացվել է 21. I. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

[1] *Առաջին գիտական ամսագիրը՝* "Journal des sçavans"*-ը, լույս է տեսել 1665 թ. հունվարի 5-ին Փարիզում: Այս ամսագրի առաջին համարի հրատարակումից 60 օր հետո՝ մարտի 6-ին, Լոնդոնում լույս տեսավ* "Philosophical Transactions of the Royal Society" *ամսագիրը: Երկու ամսագրերն էլ առ այսօր հրատարակվում են:*

[2] Price D. Little Science, Big Science. New York, Columbia University Press. 1963.

[3] *Մեծ Բրիտանիան ակադեմիական ամսագրերի ամենամեծ հրատարակողն է, որը կազմում է համաշխարհային արտադրության ավելի քան 12,53 %-ը: 2020 թ. դրությամբ՝ Միացյալ Թագավորությունում տարեկան հրատարակվել է ավելի քան 5.856 ակադեմիական ամսագիր, իսկ Միացյալ Նահանգներում՝ շուրջ 5.712 ակադեմիական ամսագիր, ինչը կազմում է համաշխարհային արտադրության 12,22 %-ը:*

Այսպիսով, ավելցուկային գիտական տեղեկատվությունը պարզապես խորացնում է առկա ճգնաժամը և խանգարում գիտնականներին ճիշտ կողմնորոշվել գիտական հրատարակումների գնահատման հարցում:

Գիտատեխնիկական գրականությունն ունի արագ «հնանալու» այժմեականությունը կորցնելու միտում: Հոդվածների արժեզրկման արագությունը տարեկան կազմում է 10–25 %: Եթե գիտնականն անընդհատ չթարմացնի գիտելիքների իր պաշարը, ապա ստիպված կլինի կամ կրկնել ուրիշի մտքերը, կամ էլ հեռանալ գիտական ասպարեզից: Այդ պատճառով էլ նրան անհրաժեշտ է անընդհատ կուտակել նոր գիտելիքներ, որոնց աղբյուրը, բնականաբար, կարող են լինել նաև ոչ թե թերթերն ու գիտահանրամատչելի ամսագրերը, այլ գիտական լուրջ հրապարակումները:

Արձանագրենք, որ գիտական միջազգային խոշոր հրատարակիչները գնային (վճարային) շատ կոշտ քաղաքականություն են վարում իրենց շտեմարաններին բաժանորդագրվելու հարցում. բաժանորդագրության գները տարեցտարի աճում են, ազդեցության բարձր գործոն ունեցող ամսագրերում հոդված հրապարակելը մեծ ծախսեր է պահանջում, որի արդյունքում անցումային և զարգացող երկրների գիտնականների համար բավականին բարդ է դառնում նման ամսագրերում հոդվածներ հրատարակելը[4]*:*

Այսպիսով, կարող ենք փաստել՝ «տեղեկատվական ճգնաժամն» արտահայտվում է հետևյալ երեք գործոններով.

1. հակասություն գիտական տվյալների անընդհատ աճի, ընկալման ու մշակման սահմանափակ հնարավորությունների միջև:

2. Գիտական հրատարակություններում օգտակար գիտելիքների հայտնաբերմանը խանգարող ավելցուկային տվյալների առկայությամբ:

3. Հրատարակչական կազմակերպությունների կողմից բաժանորդագրության շատ բարձր գների իրողությունը:

Առաջին երկու գործոնները «մեղմելու» նպատակով գիտական արտադրանքի թողարկման համաշխարհային շուկայում գործում են տարբեր կառույցներ, որոնք մասնագիտացված են գիտաչափական և մատենաչափական տվյալների հավաքման և վաճառքի հարցերով[5]*: Որպես կանոն, բոլոր խոշոր հրատարակչական կազմակերպություններն իրենց առևտրային փաթեթներում հիմնականում ներառում են* “Web of Science”*-ի և* “Scopus”*-ի կողմից ազդեցության բարձր գործոն ունեցող ամսագրերը: Ռուսաստանում գործում է*

---

[4] *Նշենք, որ 2021 թ. ազդեցության բարձր գործոն ունեցող ամսագրում մեկ հոդված տպագրելու արժեքը կազմել է մոտավորապես 3.450 ԱՄՆ դոլար, իսկ նման ամսագրերին բաժանորդագրության գները տարեկան ունեցել են 3–5 տոկոս աճ [տե՛ս* St. Bosch, B. Albee and S. Romaine. Are We There Yet? | Periodicals Price Survey 2022, April 14, 2022.– https://www.Libraryjournal.com/story/Are-We-There-Yet-Periodicals-Price-Survey-2022; K. Yup. How Scientific Publishers’ Extreme Fees Put Profit Over Progress, May 31, 2023. – https://www.thenation.com/article/society/neuroimage-elsevier-editorial-board-journal-profit/ *(դիտվել է 21. III. 2024)]:*

[5] *Գիտաչափական տվյալներ հավաքող համաշխարհային հսկաներից են* “Web of Science” *և* “Scopus” *կառույցները:*

«Գիտական վկայակոչումների ռուսական ցուցիչը»[6]*, իսկ Հայաստանում այդ գործառույթները կատարում է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի «Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնը», որն իր գործունեությունը իրականացնում է հետևյալ ուղղություններով.*

ա) Հայաստանի գիտության ոլորտի ուսումնասիրություն և մշտադիտարկում:

բ) Հայաստանում գիտաչափության՝ որպես գիտության առանձին ճյուղի ներդրում և զարգացում:

գ) Հայաստանյան ամսագրերի ազդեցության գործոնի հաշվում:

դ) Գիտական հղման հայկական ցուցիչի ստեղծում:

ե) Գիտության բնագավառում վիճակագրության, գիտական ներուժի հաշվառման, վերլուծության և կանխատեսման մեթոդաբանության մշակում:

Աշխարհում հրատարակչական կազմակերպությունների կողմից բաժանորդագրության շատ բարձր գների առկայությունը լուրջ խոչընդոտ է գիտության զարգացման գործում: Նման «աղաղակող» գների դեմ արդեն սկսել են ընդվզել նաև ամերիկյան համալսարանները և հետազոտական կենտրոնները: Բարձր գների առկայությունը զարգացող և անցումային փուլում գտնվող երկրների պարագայում «տեղեկատվական ստրկության» գործիք է դառնում:

Ի հակակշիռ հրատարակչական առևտրային մոդելներին՝ գիտնականների ջանքերով 1990-ական թվականներին սկիզբ առավ «Բաց մատչելիության» շարժումը, որը ենթադրում է անվճար հասանելություն գիտական հոդվածներին և գրքերին: Նմանատիպ պահոց առաջինը ստեղծվեց Լոս Ալամոսում ամերիկացի ֆիզիկոս Փոլ Գինսպարգի կողմից, որը հայտնի է arXiv.org *անվանումով*[7]*:*

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բոլոր 29 ամսագրերը այժմ ունեն իրենց էլեկտրոնային համարժեքները, որոնք ազատ դիտման և անվճար ներբեռնման կարգավիճակով հասանելի են ինչպես ԳԱԱ, այնպես էլ Հիմնարար գիտական գրադարանի կայքէջերից: Ամսագրային հրատարակությունների թվայնացման աշխատանքները ԳԱԱ-ում սկսվել են 2008 թ. և կրում են շարունակական բնույթ: Այսօր թվայնացվում են նաև ԳԱԱ-ի կողմից տպագրված գրքերը, որոնք ազատորեն հասանելի են օգտվողներին:

Միջազգային հրատարակիչները հետևում են էլեկտրոնային գիտական ամսագրերի՝ շուկայում առկա զարգացումներին, աշխատում հնարավորինս շատ բարձրարժեք գիտական հրատարակություններ ներառել իրենց առևտրային փաթեթներում: Խոշորագույններից մեկը "EBSCO" *հրատարակչությունն է՝ տարեկան 3 միլիարդ դոլար վաճառքի ցուցանիշով, որի միայն* "Academic Search Complete" *շտեմարանը պարունակում է ավելի քան 8.500 գիտական ամսագիր: Իսկ այդպիսի շտեմարանների քանակը գերազանցում է 400-ը:*

---

[6] Российский индекс научного цитирования (РИНЦ).

[7] arXiv.org-*ը 2024 թ. մարտ ամսվա դրությամբ պարունակում է անվճար ընթերցման և ներբեռնման հնարավորությունով մոտ 2.4 միլիոն գիտական հոդվածներ ֆիզիկայի, մաթեմատիկայի, համակարգչային գիտության, քանակական կենսաբանության և էլեկտրատեխնիկայի բնագավառներում:*

ՀՀ ԳԱԱ «Բնական գիտություններ» էլեկտրոնային ամսագիրն առաջինն էր, որ 2005 թ. ընդգրկվեց “EBSCO” *հիմնական շտեմարան:*

2013 թ. սկսած՝ “EBSCO” *հրատարակչությունը համագործակցում է ԳԱԱ նախագահության հետ՝ տարբեր շտեմարաններ ներառելով ԳԱԱ-ում հրատարակվող գիտական ամսագրերը:*

2013 թ. մարտից “EBSCO” *հրատարակչությունը իր* “Central & Eastern European Academic Source” *շտեմարանում է ներառել ՀՀ ԳԱԱ-ում հրատարկվող «Պատմաբանասիրական հանդես»-ը, ինչպես նաև՝ ակադեմիայում գործող հետևյալ ամսագրերը.*

• *«Հայաստանի կենսաբանական հանդես»՝ ներառված է* “EBSCO”*-ի* “Academic Search Ultimate” *շտեմարանում:*

• “Armenian Journal of Mathematics”՝ *ներառված է* “EBSCO”*-ի* “Academic Search Ultimate” *շտեմարանում:*

• “Armenian Journal of Physics”՝ *ներառված է* “EBSCO”*-ի* “Academic Search Ultimate” *շտեմարան:*

• *«ՀՀ ԳԱԱ զեկույցներ»՝ ներառված է* “EBSCO”*-ի* “Applied Science & Technology Source Ultimate” *շտեմարանում:*

• *«Հայաստանի ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա»՝ ներառված է* “EBSCO”*-ի* “Academic Search Ultimate” *շտեմարանում:*

2024 թ. հունվարից ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը ևս ներառվեց “EBSCO”*-ի* “Central & Eastern European Academic Source” *շտեմարանում:*

Այսպիսով, այս ամսագրերի ներկայացվածությունը նման խոշոր հրատարակչական ընկերության ծառայությունների փաթեթում մեկ անգամ ևս փաստում է հայկական գիտության բարձր վարկանիշը՝ նպաստելով հետազոտողների տեսանելիության բարձրացմանը: Այն նաև շոշափելի և առաջընթաց քայլ է այդ ամսագրերի համար, որպեսզի մոտ ապագայում ներառվեն “Web of Science” *և* “Scopus” *շտեմարաններում: Այժմ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը համագործակցում է նաև* “Crossref” *տեղեկատվական հարթակի հետ, որի արդյունքում ԳԱԱ բոլոր ամսագրերը և դրանցում առկա գիտական ուղղվածության հոդվածները ստանում են թվային օբյեկտի նույնացուցիչ:*

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ
տ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական
գրադարանի փոխտնօրեն